



European Training Foundation



EUROPEAN TRAINING FOUNDATION

Աշկերտությունը/դուալ կրթությունը զարգացնելուն ուղղված իրախուսման միջոցների նախնական ուսումնասիրություն

Արայիկ Նավոյան



ԱՅՈՒ ԳԾՈՎ 2020-2021ԹԹ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱԾԽԱՏԱԺՈՂՈՎ

Չդրեք շարժի, 12-ը մայիսի 2021թ.
Zoom հարթակ



ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1-ին գլուխը ներկայացնում է խրախուսման միջոցների դերը ԱՅՈՒՄ մասնավորապես աշակերտության / դուռալ կրթության տրամադրման համար

2-րդ գլուխը վերաբերվում է տարբեր երկրներում աշակերտության / դուռալ կրթության ֆինանսական և ոչ ֆինանսական խրախուսման միջոցների օրինակներին

3-րդ գլուխը ներկայացնում է խրախուսման միջոցների ներկա իրավիճակը Հայաստանում և ձևակերպում է դրանց վերաբերյալ առաջարկներ՝ օժանդակելու ՄԿՈՒ համակարգում աշակերտության / դուռալ կրթության հետագա զարգացմանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Գոյություն ունի գործատուներին տրվող խրախուսման միջոցների ընդհանուր տարբերակում՝ ֆինանսական և ոչ ֆինանսական
- Հասկանալու համար տրամադրվող խրախուսման միջոցների ֆինանսական կամ ոչ ֆինանսական բնույթը՝ աշկերտության / դուռալ կրթության տրամադրման համար, կարևոր է նախ քննարկել դրանց տրամադրման ծախսերի և օգուտների հարաբերակցությունը, ինչպես նաև այլ գործոնների ազդեցությունը ինչպես դրանց պահանջարկի, այնպես էլ առաջարկի վրա:

ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ / ԴՈՒԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Ա. Աշկերտների համար նախատեսված աշխատանքային ծախսերը՝ աշխատավարձ, ոչ կանոնավոր աշխատավարձի վճարումներ, գործատուից նախատեսվող այլ վճարներ

բ. Մենթորների համար նախատեսված աշխատանքային ծախսեր; լրիվ կամ կես դրույքով վերապատրաստողների վճարներ, արտաքին ուղղորդողների վճարներ

գ. Աշխատանյութի և ենթակառուցվածքի ծախսեր՝ ուսումնական սարքավորումներ, մեքենաներ, համակարգիչներ, գործիքներ և այլն

դ. Այլ ծախսեր՝ աշկերտների ընդունման վարչական ծախսեր, ապահովագրության, տրանսպորտի

և այլն:

ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ/ԴՈՒԱԼ ՄԵՋ ՆԵՐԳՐԱԿՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ

ա. Կարճաժամկետ օգուտներ մինչ ուսումնառության ավարտը՝ ոչ հմուտ, մասամբ հմուտ և հմուտ աշկերտների աշխատանքային գործունեության արդյունքը

բ. Երկարաժամկետ օգուտները կարող են ներառել.

- աշխատանքի ընդունման ծախսերի գծով խնայողությունները
- աշխատանքի ճանաչում՝ աշկերտության ընթացքում ուսանողները ծանոթանում են աշխատանքային միջավայրին և գործառույթներին
- արդյունավետության տարբերություններ՝ աշկերտության ծրագրերը հնարավորություն են տալիս ուսանողներին խորը պատկերացում կազմել աշխատանքի գործընթացի մասին,
- հմտությունների անհամապատասխանության ռիսկի նվազեցում

ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ/ԴՈՒԱԼ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ 2

- ընկերության և աշխատանքի հատուկ հմտություններ - աշկերտության ծրագրի ընթացքում ուսանողները, ովքեր աշխատում են փորձառու անձնակազմի կողքին և աշխատանքային միջավայրում, ձեռք են բերում աշխատանքի հատուկ հմտություններ՝ դառնալով ընկերության համար որակյալ աշխատուժ
- հմուտ աշխատակիցների պակասի ռիսկի նվազում
- հավատարիմ աշխատակիցներ (աշխատակիցների հաճախակի փոփոխման ցածր մակարդակ)
- ընկերության հեղինակության բարձրացում:

ԱՅՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ԿՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

- Ընկերության մեծություն
- Մասնագիտությունը և տնտեսական գործունեության ոլորտը
- Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության տևողությունը
- Ինստիտուցիոնալ ենթատեքստ (օրինակ՝ նվազագույն աշխատավարձը և կոլեկտիվ պայմանագրեր)
- Խրախուսման սխեմաների պարզությունն ու հարմարավետությունը, որը ներառում է խրախուսման սխեմաների վարչական կառավարման բարդություններն ու ծախսերը
- Ֆինանսական և ոչ ֆինանսական խրախուսման միջոցների տրամադրում:

ԱՅՈՒ ԽՐԱԽՈՒՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- **Չարկային բազայի նվազեցում.** Նվազեցումը վերաբերվում է ԱՅՈՒ գծով արված ծախսերին, որոնք համարվում են հարկային ծախս՝ պակասեցնելով հարկվող եկամուտը
- **Չարկերից ազատում.** Վերաբերվում է կոնկրետ եկամտի գծով հարկի զրոյացմանը
- **Չարկային կրեդիտ.** Չարկային պարտավորության ուղղակի պակասեցում՝ ըստ տրամադրված գումարի չափի
- **Չարկերի գեղչ.** հարկերից ազատում, երբ կառավարության նախաձեռնությամբ որոշ ընկերություններ վճարում են հարկերի նվազեցված չափ և օգտվում են ցածր դրույքաչափերից:

ԱՅՈՒ ԽՐԱԽՈՒՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ - 2

- **Սուբսիդիա.** Սուբսիդիաները վերաբերվում են ֆինանսավորման բազմաթիվ ձևերի, ներառյալ ուղղակի վճարումները, ուղղակի ներդրումները և այլ հատուկ օժանդակությունները, որոնք կառավարությունները տրամադրում են ընկերություններին, որպեսզի նրանք կարողանան ԱՅՈՒ իրականացման գործառնական և կառավարման ծախսերը փոխհատուցելու համար:
- **Դրամաշնորհ.** Դրամաշնորհները գումարային աջակցություններ են, որոնք սովորաբար պարտադիր տրվում են անհատույց, բայց պետք է օգտագործվեն սահմանված նպատակների համար:

ԱՅՈՒ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՈՉ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- **ԱՅՈՒ ծրագրերի վերանայում.** կազմակերպությունների և սովորողների կարիքների համակշռում աշկերտություն/դուլալ կրթության տևողությունը սահմանելիս
- **Կարողությունների զարգացում.** Կազմակերպությունների՝ դասավանդման ու վարչական կառավարման կարողությունների զարգացում, հատկապես ՓՄՁ մոտ
- **Ընկերության հեղինակության բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ.** ԱՅՈՒ ծրագրերում ներգրավված կազմակերպությունների սոցիալական պատասխանատվության արժևորում և հեղինակության բարձրացում՝ նպաստելով վաճառքների ավելացմանը
- **Օրենսդրական կարգավորումներ.** Կազմակերպություններից պահանջել աշկերտներ ընդունել կամ տրամադրել արտոնություններ աշկերտություն/դուլալ կրթություն տրամադրելու դեպքում:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- Ներկայումս ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում նպատակային, ֆինանսական և ոչ ֆինանսական մեխանիզմներ, որոնք կխրախուսեն գործատուների ներգրավումը ԱՀՈՒ ապահովման մեջ, բացառությամբ աշխատանքային և հարկային օրենսգրքերի երկու հոդվածներում ամրագրված անուղղակի դրույթների
- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 201.1 հոդվածը սահմանում է. « Գործատուն իր միջոցների հաշվին իրավունք ունի կազմակերպությունում կամ այլ վայրում պայմանագրային հիմունքներով կազմակերպելու աշակերտների կամ աշխատանքի ընդունվող անձի մասնագիտական ուսուցում մինչև վեց ամիս տևողությամբ՝ ուսուցման ընթացքում աշակերտին վճարելով կրթաթոշակ՝ առնվազն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով »:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ - 2

- ՀՀ Հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն «համախառն եկամուտը նվազեցվում է անմիջականորեն շահութահարկ վճարողի կողմից կամ նրա պատվերով իրականացվող գիտահետազոտական և (կամ) փորձակոնստրուկտորական աշխատանքների ու ծառայությունների վրա կատարվող ծախսերի չափով՝ այդ ծախսերի կատարման հարկային տարվա ընթացքում ամբողջովին»
- Փորձակոնստրուկտորական աշխատանքներ ու ծառայություններ են համարվում նաև կրթությունը և կադրերի պատրաստումը (վերապատրաստումը):

ԱՅՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ԿՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

- Ընկերության մեծությունը՝ 2017 թ.-ին Հայաստանի ոչ ֆինանսական ոլորտի բոլոր ընկերությունների 99.8%-ը կազմել են ՓՄՁ: Ավելին, Հայաստանի ձեռնարկությունների 94% -ը կազմում են միկրո ձեռնարկություններ, որտեղ աշխատակիցների ընդհանուր թիվը չի գերազանցում տասը և, որոնց կեսից ավելին (58%) գործատուներ չեն:
- Տնտեսության և զբաղվածության ոլորտը, որում իրականացվում է ուսուցում. Հայաստանի ձեռնարկությունների շուրջ 87.5% -ը գործում է ծառայությունների ոլորտում, ինչը կազմում է զբաղվածության գրեթե 68% -ը և առաջացնում է ավելացված արժեքի 60%-ը:
- ԱՅՈՒ տևողությունը. չնայած աշկերտության / դուալ կրթության իրավական սահմանում չկա, փորձնական ծրագրերի շրջանակներում, երեք տարվա ընթացքում ՄԿՈՒ ծրագրի համար վերապատրաստման տևողությունը տևում է 34-ից 40 շաբաթ:
- Ինստիտուցիոնալ համատեքստ՝ գոյություն չունի որևէ իրավական դրույթ ուսանողի՝ որպես աշխատողի կարգավիճակի վերաբերյալ, ուստի ընկերությունները չունեն պարտավորություն ուսանողներին վճարելու նվազագույն աշխատավարձ:

ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ / ԴՈՒԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Խրախուսման միջոց	Առավելություններ	Թերություններ
<p>ՆՄԿՈՒ ֆինանսավորման փոփոխություն՝ պրակտիկային ֆինանսավորման ընկերություններին իրականացնելուն համար</p> <p>հաստատության կառուցակարգի արտադրական հատկացված տրամադրումը ԱՅՈՒ անհրաժեշտ</p>	<ul style="list-style-type: none"> - Պետական բյուջեի համար լրացուցիչ ծախսեր չի ստեղծում - Ըստ մասնագիտությունների ԱՅՈՒ իրականացմանն անհրաժեշտ ծախսերի հաշվարկի առկայության դեպքում կիրառության և վերահսկողության հեշտություն 	<ul style="list-style-type: none"> - Ըստ մասնագիտությունների ԱՅՈՒ իրականացմանն անհրաժեշտ ծախսերի հաշվարկի մեթոդանաբության բացակայություն - Տրամադրված փոխհատուցման դիմաց ԱՅՈՒ անարդյունավետ իրականացման վտանգ՝ ինչպես երբեք;ն պարկտիկայի կազմակերպման դեպքում է
<p>Նպատակային տնտեսության համարվող կամ պակաս ունեցող ոլորտներում իրականացնելու համար</p> <p>սուբսիդիաներ առաջնահերթ</p> <p>աշխատառուժի</p>	<ul style="list-style-type: none"> - Բարձրացնում են ՓՄՁ ներգրավման մոտիվացիան (- Հեշտ է օգտագործել նախապես սահմանված նպատակների և չափանիշների շրջանակում, որոնք պետք է իրականացվեն տվյալ տնտեսական ոլորտում և տարածաշրջանում, - Նպաստում է աշխատավայրում ուսումնառության արդյունավետ իրականացմանը և, հետևաբար, նպաստել աշկերտության / դուալ կրթության մշակույթի զարգացմանը 	<ul style="list-style-type: none"> - Տարբեր դոնորների կողմից տրամադրման դեպքում կա կրկնօրինակման և անարդյունավետ օգտագործման վտանգ, - Որոշ ընկերություններ կարող են մոտիվացված լինել հիմնականում սուբսիդիաներով՝ ծախսերը ծածկելու համար, այլ ոչ թե իրապես նպաստեն աշկերտության / դուալ կրթության արդյունավետ տրամադրմանը:

ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ / ԴՈՒԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Խրախուսման միջոց	Առավելություններ	Թերություններ
<p>Կարողությունների զարգացումը ընկերությունների անձնակազմի շրջանում, որոնք ներգրավված են աշկերտության / դուալ կրթության կազմակերպման և տրամադրման գործում</p>	<p>- Նպաստում են աշխատավայրում վերապատրաստման կարողությունների զարգացմանը և աշկերտության / դուալ կրթության մատուցման վարչական կազմակերպմանը</p>	<p>- Անկայուն տնտեսական համատեքստում ՓՄՁ երկարաժամկետ պարտավորություններ ստանալու դժվարություններ</p>
<p>Օրենսդրական կարգավորումներ պետական գնումների հետ կապված՝ պետական գնումների պայմանագրերի կնքման ժամանակ աշակերտություն / դուալ կրթություն տրամադրող ընկերություններին արտոնություն տալու համար</p>	<p>- Կարող է արդյունավետորեն նպաստել երկրի տնտեսական զարգացման համար առաջնահերթ համարվող ոլորտներից ընկերությունների ներգրավմանը (զբոսաշրջություն, SS, գյուղատնտեսություն):</p>	<p>- Կարող է խտրականություն առաջացնել ՓՄՁ-ների նկատմամբ այն դեպքում, երբ սահմանափակ թվով փորձառու ընկերություններ են մասնակցում աշակերտության / դուալ կրթության տրամադրմանը</p> <p>- ՓՄՁ խտրականության դեմ մոնիտորինգի անհրաժեշտություն և, հետևաբար, ֆինանսավորման լրացուցիչ ծախսեր:</p>
<p>Ընկերության հեղինակության բարելավման միջոցառումներ, որոնք ուղղված են ԱՀՈՒ տրամադրող ընկերությունների հեղինակության ու ճանաչվածության բարձրացմանը</p>	<p>- Բարձրացնում են ՓՄՁ հեղինակությունն ու իմիջը և նպաստում են շուկայում մրցակցային առավելությունների ստեղծմանը:</p> <p>- Նպաստում են ԱՀՈՒ մշակույթի զարգացմանը</p>	<p>- Ստեղծում են լրացուցիչ ծախսեր պետական բյուջեի համար:</p>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 201.1
- ՀՀ Հարկային օրենսգիրք, հոդված 121, 6-րդ մաս
- European Commission, 2019. Small Business Act for Europe, 2019 SBA Fact Sheet ARMENIA, p. 2 https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/sba-fs-2019_armenia.pdf
- OECD, 2018. Compendium of Enterprise Statistics in Armenia 2018, p. 12.
- <https://www.oecd.org/eurasia/competitiveness-programme/eastern-partners/Compendium-Entreprise-Statistics-Armenia-2018-EN.pdf>

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Website

www.etf.europa.eu

Twitter

[@etfeuropa](https://twitter.com/etfeuropa)

Facebook

facebook.com/etfeuropa

YouTube

www.youtube.com/user/etfeuropa

Instagram

instagram.com/etfeuropa/

LinkedIn

linkedin.com/company/european-training-foundation

E-mail

info@etf.europa.eu



European Training Foundation

